ԲԱՐՈ՞Վ ԵԿԱՐ, 2020 ԹՎԱԿԱՆ.

ՇՆՈՐՀԱՎՈ՞Ր ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ՃՆՈՒՆԴ

ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՏԱՆՈ» (ԱՎԺԱՐՈՅԺԵՂՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 1 - 2 (16804) ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 1 ՀՈՒՆՎԱՐԻ 2020Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ԵՎ ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐ

«Վրաստան» թերթի խմբագրությանը եւ թերթի բոլոր ընթերցողներին անկեղծորեն շնորհավորում եմ գալիք 2020 թվականը: Տա՛ Աստված, որ Նոր տարին բարօրություն եւ ուրախություն բերի յուրաքանչյուրիս ընտանիքին ու մեր երկրին:

2020-ը ձեզ համար հոբելյանական է: Իր պատմության 100-րդ տարին բոլորող «Վրաստան» թերթը միշտ հավատարիմ է իր գլխավոր առաքելությանը՝ կամրջել վրացի եւ հայ բարեկամներին: Համոզված եմ՝ պարբերականը 100-րդ տարում եւս արժանապատվորեն կշարունակի իր շնորհակալ ուղին՝ եւս մեկ խոսուն էջ բացելով երկու ժողովուրդների փառավոր պատմության մատյանում:

Շնորհավո՞ր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ, բարեկամներ:

ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ
Վրաստանի նախագահ

«Վրաստան» թերթին, նրա բոլոր ընթերցողներին եւ մեր հայազգի համաքաղաքացիներին շնորհավորում եմ Նոր՝ 2020 թվականի եւ Սուրբ Ծննդի պայծառ տոնի առթիվ, մաղթում խաղաղություն, երջանկություն ու բարօրություն յուրաքանչյուրի ընտանիքին:

Վրաստանի եւ Հայաստանի միջեւ բարիդրացիական հարաբերությունները դարերի պատմություն ունեն: Մեր ժողովուրդների եղբայրության եւ բարեկամության ապացույցն այն է, որ Վրաստանի Առաջին Հանրապետության օրոք՝ 1920 թվականին, լույս ընծայվեց «Վրաստան» թերթը եւ անցած 99 տարիների ընթացքում երբեք չընդհատեց իր պատվավոր արժանի առաքելությունը:

Հավատացած եմ, որ մեր ժողովուրդների ու պետությունների միջեւ դարերի ընթացքում ամրագրված սիրո եւ բարեկամության առջեւ ոչինչ չի կանգնի, եւ մենք միասին կկարողանանք կառուցել մեր երկիրը:

Կրկին անգամ շնորհավորում եմ Սուրբ Ծնունդն ու Նոր տարին, մաղթում ամենայն բարիք:

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ
Վրաստանի վարչապետ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՋԻԼ ԹԱԼԱԿՎԱՋԵԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ

Վրաստանի բարձրագույն օրենսդիր մարմնի անունից սիրով ու հարգանքով շնորհավորում եմ «Վրաստան» թերթի աշխատակիցներին եւ ընթերցողներին Նոր տարվա առիթով:

2020-ը առանձնահատուկ է, այս տարի լրանում է ձեր գլխավորած թերթի հիմնադրման 100-ամյակը եւ բոլոր այդ տարիների ընթացքում պարբերականը, հավատարիմ իր առաքելությանը, հուսալի կա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱՂՈՅԱՆԻ ԱՄԱՆՈՐՅԱ ՈՒՂԵՐՁԸ

Սիրելի՛ հայրենակիցներ եւ եղբայրական վրաց ժողովուրդ, օգտվելով իր հարյուրամյա հոբելյանական տարին թեւակոխող «Վրաստան» թերթի կողմից ինձ ընձեռված հնարավորությունից թերթի խմբագրությանը եւ բազմահազար ընթերցողներին սրտանց շնորհավորում եմ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ձեզ եւ ձեր ընտանիքներին մաղթելով առողջություն, բարեկեցություն եւ նորանոր հաջողություններ:

Թող 2020 թվականը լինի ամենանվիրական երազանքների ու իղձերի իրականացման տարի, թող յուրաքանչյուրդ Նոր տարում գրանցեք աննախադեպ հաջողություններ:

Ցանկանում եմ, որ Նոր տարում ողջ աշխարհի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Թանկագի՛ն բարեկամ, հանձինս Ձեզ ի սրտե շնորհավորում եմ վրաց-հայկական դարավոր բարեկամությունը միմյանց կամրջող «Վրաստան» թերթի խմբագրության աշխատակիցների, թերթի ընթերցողների Նոր տարին ու Սուրբ Ծնունդը:

Իմ ամանորյա մաղթանքներն եմ հղում նաեւ Սամցխե-Ջավախեթիի բնակիչներին, այնտեղ ապրող բոլոր ընտանիքներին: Շնորհավոր ձեր Նոր տարին, սիրելի՛ բարեկամներ, երջանկություն ու բարգավաճում ձեզ եւ ձեր ընտանիքներին:

ԲԵՍԻԿ ԱՄԻՐԱՆԱՇՎԻԼԻ
Սամցխե-Ջավախեթիի երկրամասում պետական լիազոր-նահանգապետ

Պարոն Վան, ի սրտե շնորհավորում եմ Ձեզ, Ձեր գլխավորած «Վրաստան» թերթի աշխատակազմի Ամանորը եւ Սուրբ Ծնունդը: Իմ շնորհավորանքներն եմ հղում նաեւ Քվեմո Քարթլիի բազմազգ բնակիչներին:

Յուրաքանչյուր Նոր տարի առնչվում է լավագույն ապագայի եւ նոր սպասումների հետ: Մեր իշխանությունը հնարավորինս անում է, որ երկրի բնակչության երազանքները մարմնավորվեն, յուրաքանչյուր ընտանիք ապրի բարեկեցիկ կյանքով:

Շնորհավո՞ր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ:

ՇՈԹԱ ՌԵԽՎԻԱՇՎԻԼԻ
Քվեմո Քարթլիի երկրամասի պետական լիազոր-նահանգապետ

ՀԱՄԱՏԵՂ ՁԱՆՔԵՐՈՎ ՓՈԽԵՆՔ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՊԱՏԿԵՐԸ

Սիրելի՛ ախալքալաքցիներ եւ նիկոծմինդացիներ. ողջունում ու շնորհավորում եմ ձեզ Նոր տարվա եւ Սուրբ Ծննդի առթիվ, խաղաղություն եւ բարգավաճում ձեզ եւ ձեր ընտանիքներին: Ահա ճանապարհեցինք 2019-ը, երբ, համատեղելով մեր ջանքերը, կարողացանք նշանակալիորեն փոխել մեր երկրամասի պատկերը,

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՄԵԿԴԱՐՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԴ, «ՎՐԱՍՏԱՆ»

Շուրջ 100-ամյա գոյության ընթացքում, վիրահայերիս համար «Վրաստան» թերթը եղել եւ այսօր էլ շարունակում է մնալ մայրենի լեզվով լրատվության տարածման հուսալի աղբյուր: Սերունդներ են աճել ու դաստիարակվել՝ սպասելով թերթի ամեն նոր համարին, վստահելով նրան եւ գտնելով իրենց հուզող ու հե-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

«Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանին.

Թանկագի՛ն Վան, Ի սրտե շնորհավորում եմ իր հարյուրամյակի տարին թեւակոխող «Վրաստան» թերթի աշխատակիցների եւ ընթերցողների Ամանորն ու Սուրբ Ծնունդը: Սիրելիներս, ձեզանից յուրաքանչյուրի ընտանիքին մաղթում եմ հաջողություններ, իսկ վիրահայության կյանքում նշանակալի դեր կատարող «Վրաստանին»՝ երկարակեցություն:

Ամանորի եւ Սուրբ Ծննդի առթիվ իմ շնորհակալությունն ու մաղթանքներն եմ հղում Ծալկայի մունիցիպալիտետի աշխատասեր բնակիչներին: Թանկագի՛ն բարեկամներ, 2019-ին, չնայած շատ դժվարությունների, մենք համատեղ ուժերով շատ բան կարողացանք անել, եւ հուսով եմ, որ նոր տարում էլ, կրկին համատեղելով մեր ջանքերը, կհասնենք շատ ավելիին:

Շնորհավո՜ր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ:

ԿԱԽԱ ՕՔՐԻԱՇՎԻԼԻ
Ծալկայի եւ Դմանիսիի մունիցիպալիտետներից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՉԻԼ ԹԱԼԱԿՎԱՉԵԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մուրջ է եղել վրաց ու հայ ժողովուրդների, Վրաստանի եւ Հայաստանի անկախ պետությունների եղայրական հարաբերությունների խորացման գործում:

Ահա այսօր էլ Նոր տարվա եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ «Վրաստան» թերթի միջոցով ցանկանում եմ ողջ Վրաստանին, երկրի բոլոր քաղաքացիներին մաղթել խաղաղություն եւ փոխադարձ հարգանքով լի բարեկամության մշտանորոգ տարիներ:

Բարեկամնե՛ր, համատեղենք մեր ջանքերը հզոր, ժողովրդավարական ու հարուստ, միասնական Վրաստանի կառուցման գործում, որտեղ յուրաքանչյուրս կունենա ազատ ապրելու, աշխատելու եւ ստեղծագործելու, երջանիկ երեխաներ դաստիարակելու հնարավորություն:

Շնորհավորում եմ Նոր տարին՝ 2020 թվականը եւ մաղթում ամենայն բարին:

Թանկագի՛ն բարեկամներ, ահա մեկնարկեց 2020 թվականը եւ, այսօր՝ Նոր տարվա մեկնարկին, ի սրտե շնորհավորում ենք ձեզ եւ ձեր ընտանիքներին Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առիթներով:

Առաջին հերթին, մեր անկեղծ բարեմաղթանքներն ենք հղում մեր մունիցիպալիտետի բնակիչներին, մեր սիրելի ախալքալաքցիներին:

Սիրելի՛ բարեկամներ, ճանապարհելով 2019-ը, մենք վստահորեն կարող ենք ասել, որ անցնող տարին նշանավորվեց մեծ ծավալի աշխատանքներով: Վերանորոգվեցին ճանապարհները, դպրոցները, մյուս ենթակառույցները, կառուցվեցին շատ նոր օբյեկտներ: Նշանակալի քայլեր կատարվեցին նաեւ սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման ուղղությամբ: Շատ բան է արվել, թեպետ անելիքները դեռեւս շատ են, եւ հուսով ենք, որ ձեզ հուզող շատ հիմնախնդիրներ վերջնականապես կկարգավորվեն 2020 թվականին: Հուսով ենք, քանի որ 2020 թվականի մունիցիպալիտետի 9 645 500 լարիի հասնող բյուջեն նոր ծրագրեր ու նոր նախագծեր իրականացնելու լուրջ նախադրյալ է:

Ցանկանում ենք ամանորյա մեր մաղթանքն ուղղել նաեւ մեր սիրելի «Վրաստան» թերթին: Նոր տարին հոբելյանական է մեր սիրելի թերթի համար: Չէ՞ որ 2020-ին տոնելու է իր 100-ամյակը: Մեր «Վրաստանին» մաղթում ենք երկարակեցություն, ստեղծագործական վերելք եւ հաջողություն:

Սիրելի՛ բարեկամներ, տա՛ Աստված, որ 2020-ը ձեզանից յուրաքանչյուրի, մեր երկրի ամեն մի քաղաքացու համար դառնա երջանկության, առաջընթացի եւ ձեռքբերումների տարի, որ 2020-ին համատեղ ուժերով կրկին աշխատենք մեր սիրելի մունիցիպալիտետի բարգավաճմանը, զարգացմանն ու առաջընթացին նպատակաուղղված մեր ծրագրերի իրականացման համար:

Շնորհավո՜ր Նոր տարի ու Սուրբ Ծնունդ:

ՅՈՒՐԻ ՈՒՆԱՆՅԱՆ
Ախալքալաքիի քաղաքապետ

Այսօր՝ Ամանորի մեկնարկին, օգտվելով «Վրաստան» թերթի ընձեռած հնարավորությունից, մեր ամանորյա եւ Սուրբ ծննդյան շնորհավորանքներն ենք հղում ձեզ, թանկագին բարեկամներ: Երջանկություն, հաջողություններ, բարեկեցություն ձեզ եւ ձեր ընտանիքներին:

Անցնող տարին մեր մունիցիպալիտետի համար նշանավորվեց լայնածավալ նախագծերի ու ծրագրերի իրականացմամբ: Խոսքը վերաբերում է ինչպես մունիցիպալիտետի տարածքով անցնող հանրապետական նշանակության, այնպես էլ՝ ներքին ճանապարհների բարեկարգման, մանկապարտեզների, դպրոցների, մշակութային տների վերանորոգման, առանձին բնակավայրերի համար ջրամատակարարման ցանցի կարգավորման, գազիֆիկացման աշխատանքներին: Մեծ ծավալի աշխատանքներ են ծրագրված նաեւ 2020 թվականի համար: Այս տարվա համար հաստատված 6.936.000 լարիի չափով մունիցիպալիտետի բյուջեն, մեր խորին համոզմամբ, հնարավորություն կընձեռի նշանակալիորեն բարելավել մեր նինոծմինդացիների կենսապայմանները, խթանել փոքր եւ միջին գործարարությունը, ինչը նոր աշխատատեղերի ստեղծման նախադրյալ է: Իսկ ծրագրերի իրականացման համար, ուղղակի անհրաժեշտ է համատեղել բոլորիս ջանքերը, գործել համատեղ՝ մեր առջեւ դնելով մունիցիպալիտետը առավել բարգավաճ, բարեկարգ, գրավիչ դարձնելու նպատակ:

Օգտվելով առիթից՝ մեր ամանորյա շնահավորանքներն ենք հղում իր մեկդարյա հոբելյանը նշանավորող «Վրաստան» թերթին: Սիրելի՛ վրաստանցիներ, թող հաջողությունը ձեզ ուղեկից լինի նոր 2020 թվականին ձեր պատասխանատու եւ շնորհակալ գործում:

ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆ
Նինոծմինդայի քաղաքապետ

ՍՄԲԱՏ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ
Մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ

ՆԱԻՐԻ ԻՐԻՑՅԱՆ
Մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ

Գալդ բարի՜, գալդ բարի՜...

Բարո՜վ գնաս, մեր հին տարի: Մեր ապրած լավ օրերի վկա: Մենք այլեւս քեզ չենք տեսնի, բայց միշտ հիշելու ենք քեզ: Դու մնալու ես մեր հարազատը, մեր ապրած կյանքի մի կտորը: Դու մեզ հազարավոր նորածիններ պարգեւեցիր ու հազարավոր նորապսակներ, հայկական դպրոցի առաջին դասարանցիներ, հայկական թերթի նոր ընթերցողներ ու հայկական թատրոնի նոր կառուցվող շենք: Դու խաղաղություն ու բարի մթնոլորտ տվեցիր մեզ: Բարի՜ ճանապարհ քեզ, հին տարի, մեր բարի՜, բարի տարի:

Բարո՜վ եկար, մեր Նոր տարի: Թող բարի լինի քո մուտքը Վրաստան ու Հայաստան աշխարհ: Առատություն ու խաղաղություն բերի մեզ, մեր Նոր տարի: Ավագներին հարգանք, փոքրիկներին՝ փայփայանք: Այնպես արա, որ Ձմեռ պապին ամբողջ տարի լինի բոլորիս հետ, որովհետեւ Ձմեռ պապը միշտ բարություն է փռում իր շուրջը: Դու այս տարի հայկական թատրոնի դռներն ես բացելու, «Վրաստան» թերթի հոբելյանն ես տոնելու, հայկական դպրոցի առաջին դասարանցիների թիվն ես ավելացնելու: Բարով եկար, դու պարով, երգով ու հույսով եկար: Մեր հայ եկեղեցու լույսով դու եկար... Գալդ բարի՜... Գալդ բարի՜...

ԱՐՄԵՆ ԲԱՅԱՆԴՈՒՐՅԱՆ
Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱՌՈՅԱՆԻ ԱՄԱՆՈՐՅԱ ՈՒՂԵՐՁԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

եւ մասնավորապես՝ մեր երկինքը լինի խաղաղ ու ջինջ, ինչն էլ կհանդիսանա խաղաղ գոյակցության ու համընդհանուր զարգացման կարեւոր նախապայմանը:

Անցնող տարին նշանակալի տարի էր հայ-վրացական հարաբերությունների համար: Տեղի ունեցան բարձր մակարդակի մի շարք փոխայցելություններ, ձեռք բերվեցին կարեւոր պայմանավորվածություններ, դրվեցին համագործակցության հետագա խորացման նոր հիմքեր, նախանշվեցին նոր ծրագրեր ու նախագծեր:

2019 թվականին վիրահայության համայնքային կյանքը հագեցած էր բազմաթիվ իրադարձություններով: Մեծ շուքով նշվեցին Հայ ժողովրդի երկու հանճարեղ զավակներ Հովհաննես Թումանյանի եւ Կոմիտասի 150-ամյա հոբելյանները եւ վստահորեն կարելի է ասել, որ ողջ տարին համակված էր թումանյանական եւ կոմիտասյան շնչով:

Նոր տարին ընտանեկան տոն է եւ քանի որ ընտանիք հասկացողությունը հայ եւ վրացի ժողովուրդների համար ունի առանցքային նշանակություն, այդ իսկ պատճառով Նոր տարին եւս առանձնահատուկ վերաբերմունքի է արժանանում մեր ժողովուրդների կողմից:

Մաղթում եմ, որ Ամանորի գիշերը ընտանեկան ջերմ միջավայրում տոնական սեղանների շուրջ առ Աստված առաքված բոլորիս բարի ազնիվ ցանկությունների իրականացման ականատեսը լինենք 2020 թվականին:

Սիրելի՛ վիրահայեր եւ վրաց եղբայրական ժողովուրդ, տա՛ Աստված, որ Նոր՝ 2020 թվականը վերելքների ու նոր հաջողությունների սկիզբ դառնա, ամեն հարկի տակ թեւածեն սերը, ջերմությունն ու լավատեսությունը: Հայաստանն ու Վրաստանն էլ Նոր տարում գրանցեն աննախադեպ հաջողություններ ամենատարբեր ուղղություններով:

Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ:

Աստված պահապան հայ եւ վրացի եղբայրական ժողովուրդներին:

ՀԱՄԱՏԵՂ ՋԱՆՔԵՐՈՎ ՓՈԽԵՆՔ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՊԱՏԿԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

այն դարձնել ավելի գրավիչ ու ժամանակակից: Միասին աշխատեցինք, միասին առաջընթաց ունեցանք: Սակայն անելիքներ դեռ շատ ունենք, կարգավորման ենթակա հիմնախնդիրները շատ են...

Համոզված եմ, որ 2020-ին կշարունակենք համատեղ մեր գործունեությունը՝ ի բարօրություն մեր հարազատ երկրամասի, նրա աշխատասեր ու ջանադիր բնակչության:

Իմ բարեմաղթանքներն եմ հղում նաեւ մեր սիրելի «Վրաստան» թերթի աշխատակիցներին: Թանկագի՛ն բարեկամներ, դուք այս տարի նշելու եք մեր պանծալի «Վրաստանի» 100-ամյակը: Մաղթում եմ ձեզ, ձեր ընտանիքներին երջանկություն, խաղաղություն, առաջընթաց, իսկ մեր սիրելի «Վրաստանին»՝ հարատեւություն, բազում ընթերցողներ:

ՀԵՆՉԵԼ ՄԿՈՅԱՆ
Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետներից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՄԵԿԴԱՐՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԴ, «ՎՐԱՍՏԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տաքրքրող հարցերի պատասխանները: Թերթը էական դերակատարություն ունի վրացական հանրությանը հայերի ինտեգրման, Մայր Հայրենիքից, Սփյուռքից եւ Արցախից տեղեկատվությունների հաղորդման, Հայաստան-Վրաստան կապերի ու հայ-վրացական բարեկամության ամրապնդման գործում:

Տարիներ շարունակ թերթը Վրաստանի հայությանը համախմբող, նրա կրթամշակութային եւ հոգեւոր դաստիարակությանն օժանդակող կարող ուժերից մեկն է: Այն նաեւ իր ներդրումն ունի վիրահայ համայնքի հոգեւոր դաստիարակության, եկեղեցու՝ համախմբող ուժի լուսաբանման ուղղությամբ: Պարբերաբար անդրադառնալով Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու, Վիրահայոց թեմի լայնածավալ գործունեությանը՝ թերթը նաեւ Վրաստանի հայաբնակ շրջանների հայությանը կապող օղակն է, եկեղեցու կենտրոնաձիգ գործունեության քարոզիչը:

Բազում տարիների իր գործունեությամբ ճանաչված, յուրաքանչյուր հայ ընտանիք մուտք գործող «Վրաստան» թերթին մաղթում ենք երկար տարիների գործունեություն, մնալ ավետաբեր լուրերի տարածող ու քարոզող:

Աստված պահապան թերթի ստեղծագործական աշխատակազմին եւ նվիրական ընթերցողներին:

ՏԵՐ ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎԹՅԱՆ
ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ԿԱՅԱՆԱՆՔ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ»

Դեկտեմբերի 25-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին Վրաստանի Առաջին ալիք հեռուստաընկերությանը տված հարցազրույցում ներկայացրեց իր դիրքորոշումը երկրի հանրությանը հետաքրքրող հարցերի վերաբերյալ:

Մասնավորապես, խոսելով բռնազավթված տարածքների հարցի կարգավորման մասին, նախագահը համոզմունք հայտնեց, որ Ժնեւյան բանակցությունների ձեւաչափը պետք է պահպանել, միաժամանակ, Թբիլիսին կարող էր Մոսկվայի հետ երկխոսությունը վարել «նորմանդական ձեւաչափի» օրինակով, որտեղ Վրաստանը Ռուսաստանի հետ բանակցություններում ներկայացված կլիներ իր գործընկերների հետ: Վրացական պետության ղեկավարը վստահ է, որ հարկավոր է օգտագործել բոլոր միջոցները, որպեսզի բեկում տեղի ունենա Մոսկվայի եւ Թբիլիսիի հարաբերությունների շուրջ ստեղծված իրադրության մեջ:

Անդրադառնալով Դավիթ Գարեջիի վիճահարույց հարցին՝ Սալոմե Զուրաբիշվիլին նշեց, որ մենք պետք է կայանանք՝ որպես պետություն, եւ դա պահանջում է, որ մեր սահմանները լինեն հստակեցված, ապա եւ պաշտպանված:

Հեռուստաընկերությանը տված հարցազրույցում Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին ցանկություն հայտնեց, որ երկրի քաղաքական գործիչները կարողանան երկխոսություն վարել առանց արտասահմանյան դիվանագետների միջամտության, թեպետ ընդգծեց նաեւ, որ «եթե օտարերկրյա դեսպանները ինչ-որ բանի հասնեն, ես դա կողջունեմ, քանի որ այժմ գլխավորը արդյունքի հասնելն է, այլ ոչ թե այն՝ ով դրան կհասնի»:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՉԵՎԱԿԵՐՊՎԵԼ Է ԵՌԱԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

Դեկտեմբերի 23-ին Թբիլիսիում անցկացվեց եռյակի ձեւաչափով գործող՝ Վրաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի արտաքին գործերի նախարարներ Դավիթ Զալկալիանու, Էլմար Մամեդյարովի եւ Մեւլութ Չավուշօղլու ութերորդ հանդիպումը:

Հանդիպմանը, տարբեր ոլորտներում համագործակցության ծավալմանն ուղղված փոխհետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկումների արդյունքում, նախարարները ստորագրեցին ութերորդ եռակողմ հանդիպման համատեղ հայտարարությունը:

Համատեղ մամլո ասուլիսին Դավիթ Զալկալիանին հայտարարեց, որ փաստաթղթում ներկայացված են բոլոր ոլորտներում Վրաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի ընդհանուր շահերի կոնկրետ գործողություններն ու ծրագրերը, ինչպես նաեւ եռակողմ համագործակցության մեխանիզմները:

Վրաստանի ԱԳ նախարարի հայտարարությամբ, Վրաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի արտգործնախարարների 8-րդ եռակողմ հանդիպմանը քննարկվել է եռակողմ ձեւաչափի 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը:

Հանդիպման ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել համատեղ տարածաշրջանային տրանսպորտային-էներգետիկ նախագծերին, մասնավորապես, արդեն իսկ հաջողությամբ ավարտված Բաքու-Թբիլիսի-Ջեյհան եւ Բաքու-Թբիլիսի-Էրզրում էներգետիկ նախագծերը: Միեւնույն ժամանակ, նախարարները վերահաստատեցին իրենց պատրաստակամությունը՝ շարունակել հարավային էներգետիկ միջանցքի լիարժեք իրացման համակարգումը: Կարեւորվել է նաեւ բնական գազի խողովակաշարի (TANAP) ծրագրի երկրորդ փուլի ավարտը, որը բացվել է նոյեմբերի 30-ին Թուրքիայում:

Թբիլիսյան եռակողմ հանդիպման ձեւաչափի շրջանակներում, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հանդիպում ունեցավ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մեւլութ Չավուշօղլու հետ:

Հանդիպմանը շեշտը դրվեց երկու երկրների միջեւ բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհրդի հերթական նիստին վերաբերող հարցերի վրա, որը ծրագրվում է անցկացնել եկող տարվա ընթացքում, Անկարայում:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ԲԺԻՇԿ ՎԱԺԱ ԳԱՓՐԻՆԴԱՇՎԻԼԻՆ ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿՎԵԼ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Ցխինվալիի ինքնահռչակ հանրապետության իրավապահները ձերբակալել եւ մեկ տարի 9 ամսվա կալանք էին սահմանել բժիշկ Վաժա Գափրինդաշվիլուն: Բժշկին ձերբակալել էին նոյեմբերի 9-ին: Անջատողականները նրան մեղադրել են այսպես կոչված սահմանը անօրինի հատելու մեջ, սակայն, Վաժա Գափրինդաշվիլին իրեն մեղավոր չի ճանաչել:

Բժշկի ապօրինի ձերբակալությունը բողոքարկում էր միջազգային հանրությունը: Եվ ահա, դեկտեմբերի 28-ին Վաժա Գափրինդաշվիլին ազատ արձակվեց: Նա շնորհակալություն հայտնեց բոլորին, ովքեր ներգրավված են եղել այս գործընթացին:

- Շատ անսպասելի էր այս ամենն ինձ համար: Դեկտեմբերի 31-ին նշանակված էր վճռաբեկ դատարանի նիստը: Դեռ շատ հուզված եմ: Առաջին հերթին, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլորին, ովքեր սրտացավ են եղել այս իրավիճակի նկատմամբ, դա լինի կառավարություն, խորհրդարան, ոստիկանություն, թե անվտանգություն: Առաջին հերթին, շնորհակալություն եմ հայտնում իմ գեղեցիկ կնոջն ու երեխաներիս: Շնորհակալություն իմ ընկերներին, ովքեր այս ընթացքում աջակցեցին ինձ: Շնորհակալություն բոլորին,- հայտարարեց Վաժա Գափրինդաշվիլին:

ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

ՄԱՀԱՑԵԼ Է «ԳՅՈՒՐՋԻՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐԸ



Դեկտեմբերի 20-ին, կյանքի 72-րդ տարում, ծանր հիվանդությունից հետո, կյանքից հեռացավ «Գյուրջիստան» թերթի գլխավոր խմբագիր, Վրաստանի վաստակավոր ժուռնալիստ Իսլամ Գադիսի Ալիեւը:

1970 թվականին Թբիլիսիի Ա.Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտն ավարտելուց հետո նա, նախ՝ որպես սրբագրիչ, ապա՝ կրտսեր գրական աշխատող, թղթակից, բաժնի վարիչ, պատասխանատու քարտուղար, խմբագրի տեղակալ, աշխատանքի է անցել «Սովետ Գյուրջիստանի» հանրապետական թերթում: 2015 թվականին նշանակվել է «Գյուրջիստան» թերթի գլխավոր խմբագիր: Լրագրողի գործունեությանը զուգընթաց, Ի.Ալիեւը հեղինակել է մի քանի գեղարվեստական գրքեր:

Ամուսնացած էր, ուներ երեք երեխա ու թոռներ:

Բարի գործընկերոջ, ազնիվ մարդու հիշատակը երկար կմնա նրան ճանաչողների սրտերում:

Քեթեւան Ցիխելաշվիլի, Շոթա Ռեխվիաշվիլի, Զաուր Դարգալի, Կախա Օքրիաշվիլի, Ռուսլան Գաջիեւ, Սալավան Միրզոեւ, Ազեր Սուլեյմանով, Ազիզ Դալիվալով, Ռուսլան Պողոսյան, Մարինա Թեքթումանիձե, Մարինե Գիգինեիշվիլի, Վան Բայբուրթյան, Յուրի Պողոսյան, Վադիմ Անաստասիադի, Սպարտակ Քոբուլիա:



42 ՏԱՐԻ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ՕԾՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ



Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի օծվելուց անցել է 42 տարի:

Այս օրվան նվիրված՝ դեկտեմբերի 25-ին Սվետիցխովելի տաճարում մատուցվեց տոնական պատարագ: Կաթողիկոս-Պատրիարքի հետ, ծառայությանը մասնակցեցին նաեւ տարբեր թեմերի առաջնորդները:

Տոնական պատարագին ներկա էին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, երկրի գործադիր ու օրենսդիր մարմինների ներկայացուցիչներ: Պատարագին ներկա էր նաեւ «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլին:

Իլիա Երկրորդն ավանդաբար շնորհավորանքներ է ստանում իշխանության ներկայացուցիչներից ու հավատացյալներից:

Իլիա Երկրորդը Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք է դարձել 1977 թվականին, 44 տարեկան հասակում:

ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՍԸ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

2019 թվականի Վրաստանի լավագույն մարզիկի կոչմանն արժանացել է ծանրամարտիկ Լաշա Տալախաձեն: Նշված կոչումը նրան տրվել է Վրաստանի Ազգային օլիմպիական կոմիտեի գործադիր կոմիտեի որոշմամբ:

Նիստի մասնակիցների քվեարկությամբ, որոշվել է նաեւ Վրաստանի տարվա լավագույն սպորտային ֆեդերացիան, եւ նշված կոչմանն արժանացել է Վրաստանի ըմբշամարտի ազգային ֆեդերացիան:

2019 թվականի լավագույն մարզիչ է ճանաչվել Գիորգի Իանտբելիձեն: Մինչեւ 23 տարեկան լավագույն մարզիկ՝ բասկետբոլիստ Գոգա Բիթաձեն:

«Տարվա հայտնություն» տիտղոսը շնորհվել է ձյուդոիստներ Լուկա Մախսուրաձեին եւ Էթեր Լիպարտելիանուն:

ՎԹԱՐԻ Է ԵՆԹԱՐԿՎԵԼ ՄՈՍԿՎԱ-ԹԲԻԼԻՍԻ ԱՎՏՈԲՈՒՍԸ

Ռուսաստանի Լիպեցկի մարզում շրջվել է Մոսկվայից Թբիլիսի երթեւեկող ավտոբուսը: Ավտոբուսում եղել են միայն Վրաստանի քաղաքացիներ:

Զոհվել է 2, վիրավորվել՝ 9 ուղեւոր, այդ թվում՝ նաեւ երեխաներ: Ավտոբուսում ընդհանուր առմամբ եղել է 19 մարդ:

Տրանսպորտային պատահարի պատճառներից մեկը եղանակային պայմաններն է:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՄԵԿ ԵՐՐՈՐԴԸ՝ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ, ԵՐԿՈՒ ԵՐՐՈՐԴԸ՝ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԸՆՏՐԱԿԱՐԳԻ ՆՈՐ ՏԱՐԲԵՐԱԿ

Ինչպես արդեն հաղորդել ենք, նոյեմբերի 14-ին երկրի խորհրդարանի կողմից 2020 թվականի խորհրդարանական ընտրությունները միայն համամասնական ընտրակարգով եւ զրոյական ընտրաշեմով անցկացնելու օրինանախագիծը մերժվեց, ինչը հանգեցրեց ընդդիմադիր կուսակցությունների միավորման ու ընդհանուր դիրքորոշման մշակման:

Ստեղծված փակուղային վիճակի հաղթահարման նպատակով, Վրաստանում հավատարմագրված Եվրամիության երկրների դեսպանների միջնորդությամբ կազմակերպվեց կառավարող ուժի եւ ընդդիմության ներկայացուցիչների հանդիպումը: Առաջին երեք նման հանդիպումները ոչ մի արդյունքի չհանգեցրին: Չորրորդ հանդիպմանը կառավարող թիմը ներկայացրեց ընտրակարգի փոխզիջմանն ուղղված տարբերակ:

Մասնավորապես, իշխող «Վրացական երազանք» կուսակցությունը ընդդիմությանն առաջարկեց պահպանել ընտրական խառը համակարգը՝ միեւնույն ժամանակ ավելացնելով համամասնական կարգով ընտրվող պատգամավորների քանակը:

Ընդդիմության հետ հանդիպման ավարտից հետո հրավիրված մամլո ասուլիսին, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն հայտարարեց, որ իշխանության առաջարկը ենթադրում է համամասնականի մասնաբաժինը համակարգում հասցնել 2/3-ի:

- Այս առաջարկի շուրջ համաձայնության հասնելու դեպքում, համամասնական կարգով կընտրենք, 77-ի փոխարեն, 100 պատգամավոր, իսկ մեծամասնական մանդատների քանակը կնվազի՝ դառնալով 50, նախկին 73-ի փոխարեն,- հայտարարեց Արչիլ Թալակվաձեն:

Խորհրդարանի նախագահի խոսքով, ելնելով առկա իրավիճակից, «Վրացական երազանքի» թիմը կարողացավ ընդունել եւ ներկայացնել փոխզիջման եւ օպտիմալ որոշում: Նա ընդդիմությանը կոչ արեց միանալ հարցի քննարկմանն ու վերջացնել ընտրակարգի վերաբերյալ խառնաշփոթը:

Նշենք, որ «Վրացական երազանքի» վերոնշյալ առաջարկությունը եւս անընդունելի է միացյալ ընդդիմության կողմից, քանի որ վերջիններս հայտարարում են, որ կառավարող թիմի հետ սկզբունքային պայմանավորվածություն կար 2020 թվականի ընտրությունները միայն համամասնական ընտրակարգով անցկացնելու վերաբերյալ:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ

ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻՆ՝ ԱՄՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ

Աշխատանքային այցով ԱՄՆ-ում էր գտնվում Վրաստանի խորհրդարանի փոխխոսնակ Կախա Կուճավայի գլխավորած «Վրացական երազանք» կուսակցությունից պատգամավորների պատվիրակությունը: Այցի շրջանակներում, Վրաստանի ներկայացուցիչները հանդիպումներ ունեցան ԱՄՆ Սենատի եւ Կոնգրեսի անդամների հետ, բանակցություններ վարեցին ԱՄՆ պետական դեպարտամենտում:

Ինչպես տեղեկացրել է Վրաստանում ԱՄՆ դեսպանությունը, Վաշինգտոնում անցկացված հանդիպումներից հետո, որը պետական քարտուղարի օգնականի տեղակալ Ջորջ Կենտի եւ խորհրդարանի նախագահի տեղակալ Կախա Կուճավայի գլխավորությամբ, անցկացվել է «Վրացական երազանքի» պատվիրակության հետ, պետական դեպարտամենտը տարածել է «Ժողովրդավարական զարգացումը Վրաստանում» հայտարարությունը:

«Ամերիկայի Միացյալ Նահանգներն աջակցում է անվտանգ, հաջողակ եւ ժողովրդավար Վրաստանին: Մենք ողջունում ենք դատական բարեփոխման չորրորդ ալիքի առաջընթացը եւ աջակցում կառավարող կուսակցության ու ընդդիմության կուսակցությունների ներկայացուցիչների միջեւ ընթացող երկխոսությանն ընտրական բարեփոխման մասին: Մենք Վրաստանի կառավարությանը կոչ ենք անում՝ կայունացնել ժողովրդավարության սկզբունքների, անհատական ազատության եւ օրենքի գերակայության նկատմամբ հավատարմությունը՝ ապահովելով քաղաքականապես անաչառ դատարան եւ դատախազություն: Ամերիկայի Միացյալ Նահանգները կշարունակի աշխատանքն իր ռազմավարական գործընկեր Վրաստանի հետ»,- նշված է Վրաստանում ԱՄՆ-ի դեսպանության պաշտոնական կայք-էջում:

Այդ օրերին ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփն ստորագրեց 2020 թվականի պաշտպանության բյուջեն: ԱՄՆ-ի՝ 2020 թվականի պաշտպանության բյուջեն կազմում է 738 միլիարդ դոլար: 658 միլիարդ դոլարն ուղղվելու է պաշտպանության դեպարտամենտի եւ էներգետիկայի դեպարտամենտի ազգային անվտանգության ծրագրերին, իսկ 71,5 միլիարդ դոլարը հատկացված է արտասահմանյան գործողությունների համար:

«ԱՄՆ-ի ազգային պաշտպանության հեղինակազորման արձանագրության» մեջ գրված են ԱՄՆ-ի պաշտպանության դեպարտամենտի առաջնահերթությունները: Փաստաթղթում խոսվում է նաեւ Վրաստանին աջակցելու մասին: Մասնավորապես, փաստաթղթում ասվում է, որ «Վրաստանն ԱՄՆ-ի արժեքավոր գործընկերն է եւ բազմիցս արտահայտել է երկու երկրների շահերն առաջ քաշելու նկատմամբ իր հավատարմությունը, այդ թվում՝ վրաց զինվորականների ՆԱՏՕ-ի առաքելություններին մասնակցության ճանապարհով»: 2020 թվականի արձանագրության մեջ զգալիորեն ավելացած է Վրաստանին սահմանված գումարը եւ կազմում է 132 025 000 դոլար, որը Վրաստանի եւ ԱՄՆ-ի հարաբերությունների ընթացքում ամենամեծ գումարն է:

ԱՄՆ-ի բյուջեի օրենքը կրկին ներառում է գրառում Վրաստանի բռնազավթված տարածքների չճանաչման մասին:

Ըստ արձանագրության, հիշատակված օրենքով սահմանված ֆինանսավորումից չի կարող օգտվել որեւէ երկրի կենտրոնական կառավարություն, եթե ԱՄՆ-ի պետական քարտուղարը պարզի, որ նշված երկիրը ճանաչել է Ռուսաստանի կողմից բռնազավթված Աբխազիայի եւ Ցխինվալիի շրջանի անկախությունը, կամ դիվանագիտական հարաբերություններ է հաստատել նրանց հետ:

Արձանագրությունն ուժի մեջ է մտել ԱՄՆ-ի նախագահի ստորագրումից անմիջապես հետո:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դեկտեմբերի 19-ին Վրաստանի Երիտասարդության ազգային պալատում, «Զրույց Ազգային պալատի ընթերցարանում» նախագծի շրջանակներում, կայացավ հանդիպում աստվածաբան, Վրաստանի ժողովրդական պաշտպանի գրասենյակին կից Հանդուրժողականության կենտրոնի ղեկավար, Թբիլիսիի Իլիայի անվան պետական համալսարանի պրոֆեսոր Բեքա Մինդիաշվիլու հետ:

Միջոցառմանը ընդգրկվել էին Պալատի սաները, մայրաքաղաքի թիվ, թիվ 103, 104 դպրոցների աշակերտները: Բեքա Մինդիաշվիլին ներկայացավ «Հանդուրժողականության մշակույթ» թեմայով դասախոսությամբ: Վերջինս խոսեց հանդուրժողականության նշանակության ու երեւույթի պատմության, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանդուրժողականության սկզբունքների վերաբերյալ Դեկլարացիայի, հանդուրժողականության մշակույթի շուրջ: Ընդգծեց, որ հանդուրժողականությունը բացառում է ցանկացած բնույթի բռնություն, ագրեսիա, անհանդուրժողականություն, իսկ անհրաժեշտ նախապայմանը հասարակության խաղաղ եւ ներդաշնակ համակեցությունն է: Բանախոսը բերեց համապատասխան օրինակներ գրական տարբեր ստեղծագործություններից: Նա կոչ արեց ունկնդիրներին ձգտելու աջակցել հանդուրժողականության, բազմակարծության, փոխադարձ հարգանքի ու խաղաղ գոյակցության սկզբունքներին, միշտ հանդես գալ խտրականության զոհերի պաշտպանության օգտին:

Վերջում դպրոցականներն առաջադրեցին հարցեր, ներգրավվեցին ակտիվ երկխոսության մեջ:

Միջոցառումը նախաձեռնել էր Պալատի գրադարանի ղեկավար, Վրաց լեզուն ոչ վրացալեզու աշակերտների համար ակումբի ղեկավար Քեթեւան Կալանդաձեն, ներկաների թվում էին նաեւ Վրաստանի ԿԳՄՍ նախարարության փորձագետներ Դեսպինե Քոիավան եւ տողերիս հեղինակը:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԱՀԱՆԴԵՍ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 26-ին Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում կայացավ «Սուրբ Մովսես Խորենացի» նախակրթարանի ամանորյա տոնահանդեսը:

Դահլիճը, ուսուցիչ-դաստիարակների ջանքերով եւ ծնողների աջակցությամբ, իսկական տարեմուտի տոնական տեսք էր ստացել: Տոնածառի կողքին, կենտրոնում տեղեր էին զբաղեցրել սիրունատես փոքրիկները՝ զուգված ու զարդարված, ոմանք՝ անտառի բնակիչների, ոմանք՝ հրեշտակների, ոմանք էլ՝ հեքիաթների հերոսների տեսքով:

Տոնահանդեսի պատվավոր հյուրերն էին Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը, հոգեւոր դասը, թեմի պաշտոնեությունը:

Վիրահայոց թեմի կրթության բաժնի տնօրեն Եվգենյա Մարկոսյանի բացման խոսքից եւ Ամանորյա ու Սուրբծննդյան բարեմաղթանքներից հետո, ելույթ ունեցան փոքրիկները: Երեխաները արտասանեցին, երգեցին ու պարեցին եւ ցուցադրեցին Նոր տարվան նվիրված այն ամենը, ինչը նրանց սովորեցրել էին հարգարժան ուսուցիչները:

Նախակրթարանի սաների ստեղծած տրամադրությանը, ավանդույթի համաձայն, միացավ Ձմեռ պապը եւ իր գոհունակությունը հայտնեց նրանց գեղեցիկ ելույթների համար:

Հավարտ միջոցառման, ներկաներին իր օրհնությունը բաշխեց Վիրահայոց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը: Հայր Սուրբը նախակրթարանի գործունեությանը ցուցաբերած աջակցության համար շնորհակալագիր հանձնեց նախակրթարանի ակտիվ ծնող Գյուլասարյանին:

Այնուհետեւ, Ձմեռ պապը բոլոր փոքրիկներին բաժանեց ամանորյա նվերներ, որ պատրաստել էին «Սուրբ Մովսես Խորենացի» նախակրթարանը եւ «Արմենիա» խանութը՝ ղեկավար Էդվարդ Մուրադյանի գլխավորությամբ: